ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2023 թվականի N 2344 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-Ի N 318-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» N 318-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 3-րդ կետի 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար բժշկական կազմակերպություններ ուղեգրման կարգը՝ համաձայն N 7 հավելվածի».

2) որոշման N 1 հավելվածի՝

ա. 2-րդ կետը «սահմանափակումով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձինք» բառերով,

բ. 3-րդ կետը «սահմանափակումով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև նաև 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք» բառերով,

գ. 4-րդ կետը «սահմանափակումով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք» բառերով,

դ. 19-րդ կետը «շրջանակներում)» բառից հետո լրացնել «, ինչպես նաև զինծառայության ընթացքում ստացած վնասվածքի, հիվանդության պատճառով զորացրված անձինք, որոնց բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում հաշմանդամության խումբ չի սահմանվել (հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում՝ վերականգնողական անհատական ծրագրի շրջանակներում և վերա-կանգնողական անհատական ծրագրերի գործողության ժամկետում)» բառերով.

3) որոշման N 4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

4) որոշման N 5 հավելվածի 2-րդ կետի՝

ա. 9-րդ ենթակետը «սահմանափակումով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձինք» բառերով,

բ. 10-րդ ենթակետը «սահմանափակումով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև նաև 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք» բառերով.

5) որոշման N 7 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի.

6) որոշման N 8 հավելվածի աղյուսակի 2-րդ կետը «սահմանափակումով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձինք» բառերով.

7) որոշման N 10 հավելվածի՝

ա. 2-րդ կետը «սահմանափակումով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձինք» բառերով,

բ. 3-րդ կետը «սահմանափակումով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք» բառերով,

գ. 4-րդ կետը «սահմանափակումով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք» բառերով.

8) որոշման N 2 հավելվածի «V1» բաժինը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝

1) յուրաքանչյուր եռամսյակ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել ամփոփ հաշվետվություն փորձարարական ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ.

2) մինչև 2024 թվականի հունվարի 30-ը մշակել և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ համաձայնեցնել օֆերտային պայմանագրի օրինակելի նոր ձև:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ